

## ՔԱՂԱՔԱՑԻՆՆԵՐԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ ԿԱՊԱՆՈՒՄ

Ս/թ դեկտեմբերի 3-ին (հոկտեմբեր ամսվա փոխարեն) ՀՀ Սյունիքի մարզպետ Հունան Պողոսյանը Կապան համայնքում կատարել է քաղաքացիների ընդունելություն:

Ընդունելությանը ներկայացել է 19 քաղաքացի:

Դրամական օգնություն ստանալու խնդրանքով դիմել էր տասներկու, աշխատանքի տեղավորման՝ հինգ, վթարային շենքի և նպաստի վերականգնման վերաբերյալ խնդրանքով՝ մեկական քաղաքացի:

Դրամական օգնության համար դիմած տասը քաղաքացիների դիմումներին տրվել է դրական լուծում, երկու դիմում գտնվում է ուսումնասիրման փուլում:

Աշխատանքի տեղավորման մասին դիմումները վերցվել են հաշվառման, և ուսումնասիրվում են դրանց լուծման հնարավորությունները:

Մարզպետարանի համապատասխան ստորաբաժանումներում մարզպետի հանձնարարությամբ ուսումնասիրվում են վթարային շենքի և նպաստի վերաբերյալ դիմումները: